ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/249 «27» 07 2026թ.

«ԱՎԱՆԳԱՐԴ ՄՈԹՈՐՍ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՏԱՐՈՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

ՀՐԱՎԵՐ

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ներքին գործերի նախարարության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել **ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ:**

Առաջարկվում է Ձեզ մատուցել վերոնշյալը:

Գնումները ֆինանսավորվելու է ՀՀ ՆԳՆ բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնման ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գնումներին մասնակցելու իրավունքը հավաստելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ **«Ավանգարդ Մոթորս» ՓԲԸ-ն** ունի.

1. մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը
2. մասնագիտական փորձառություն
3. տեխնիկական միջոցներ
4. ֆինանսական միջոցներ
5. աշխատանքային ռեսուրսներ

Ձեզ է ուղարկվում **ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2026/Ա-64** ծածկագրով ընթացակարգի պայմանագրի նախագիծը:

Համաձայնության դեպքում անհրաժեշտ է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ձեր կողմից ստորագրված և կնքված պայմանագիրը, ինչպես նաև ներկայացնել իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություններ պարունակող կայքէջի հղումը:

Տ. ԵՆՈՔՅԱՆ